


# *Armenian fairy-tales* *in Armenian*



Producer & Director ..... Harout Movses  
Illustrations ..... Sarkis Postajian  
Music ..... Gina Vanian  
Cover Design ..... Sahag Ekshian  
Sound Editing ..... Ani Sound Studio  
Printing ..... Hamlet Karapetyan

TO ORDER CALL : [818] 546-2000



© Areg Productions. All Rights Reserved. Distributed by Aralez, Inc. Printed in U.S.A.



**Armenian Fairy Tales**

Իմ հեռավոր զարմիկներին՝  
Վահագնին և Արեգին  
Հարուժ քեռի

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՍԵՎՈՒԿ ՈՒԼԻԿԸ .....1
- ԱՆՀԱՂԹ ԱՔԼՈՐԸ ..... 4
- ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԸ .....7
- ԿԻԿՈՍԻ ՄԱՀԸ .....12
- ԳՏՆՎԱԾ ԵՐԱԶ ..... 17



### ՍԵՎՈՒԿ ՈՒԼԻԿԸ

Խոր անտառում մի այժ է լինում: Ունենում է մի գեղեցիկ ուլ:

Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու: Արածում է և իրիկունը կուրծքը լիքը տուն է գալիս: Տուն է գալիս, դուռը զարկում ու մկկում, կանչում.

Սևուկ ուլիկ,  
Սիրուն բալիկ,  
Ման եմ եկել սարեսար,  
Կաթն եմ արել քեզ համար,  
Դոճակը բա՛ց, ներս գամ ես,  
Անուշ-անուշ կաթ տամ քեզ.  
Սևուկ ուլիկ,  
Սիրուն բալիկ:  
Ուլիկը իսկույն վեր է թռչում, դուռը բաց անում:  
Մայրը կաթ է տալիս նրան ու կրկին գնում արոտ:  
Էս բոլորը թաքուն տեսնում է գայլը: Մի իրիկուն  
այծից առաջ գալիս է, դուռը զարկում ու իր հաստ  
ձայնով կանչում.

Սևուկ ուլիկ,  
Սիրուն բալիկ,  
Ման եմ եկել սարեսար,  
Կաթն եմ արել քեզ համար,  
Դոճակը բա՛ց, ներս գամ ես,  
Անուշ-անուշ կաթ տամ քեզ.  
Սևուկ ուլիկ,  
Սիրուն բալիկ:  
Ուլիկը լսում է, լսում ու պատասխանում. «Էդ ո՞վ  
ես դու, չեմ ճանաչում: Իմ մայրը էդպես չի կանչում:  
Նա քաղցր ու բարակ ձայն ունի: Քո ձայնը կոշտ է ու  
կոպիտ: Դուռը բաց չե՛մ անի... Գնա՛... Չեմ ուզում  
քեզ...»:

Ու գայլը հեռանում է, գնում:  
Գալիս է մայրը, դուռը ծեծում.  
Սևուկ ուլիկ,

Սիրուն բալիկ,  
Ման եմ եկել սարեսար,  
Կաթն եմ արել քեզ համար,  
Դոճակը բա՛ց, ներս գամ ես,  
Անուշ-անուշ կաթ տամ քեզ.  
Սևուկ ուլիկ,  
Սիրուն բալիկ:  
Ուլիկը դուռը բաց է անում, կաթ է ուտում ու մորը  
պատմում.

Գիտե՞ս, մայրի՛կ, ինչ եղավ: Մի քիչ առաջ մեկը  
եկավ, դուռը զարկեց ու կանչում էր.

Սևուկ ուլիկ,  
Սիրուն բալիկ:  
Ասում էր՝ դուռը բա՛ց արա: Էնպե՛ս հաստ ձայն  
ունե՛ր: Էնպե՛ս վախեցա՛, էնպե՛ս վախեցա՛... Դուռը  
բաց չարի, ասի՛ չեմ ուզում, գնա...

— Պա՛, պա՛, պա՛, պա՛, Սևուկ ջան, ի՛նչ լավ է  
եղել, որ բաց չես արել, — ասաց վախեցած մայրը: —  
Էդ գայլն է եղել. եկել է, որ քեզ ուտի: Մյուս անգամ  
էլ որ գա, բաց չանես. ասա՛ գնա՛, թե չէ իմ մայրը  
կգա ու իր սուր պոզերով քեզ կսպանի:





## ԱՆՀԱՂԹ ԱՔԼՈՐԸ

Լինում է, չի լինում՝ մի աքլոր է լինում:

Էս աքլորը քուջուջ անելիս մի ոսկի է գտնում:

Կտուրն է բարձրանում, ձեն է տալի.

– Ծուղրուղո՛ւ, փող եմ գտե՛լ...

Թագավորը լսում է, իր նազիր-վեզիրին հրամայում է՝ գնան խլեն բերեն:

Նազիր-վեզիրը գնում են՝ խլում բերում:

Աքլորը կանչում է.

– Ծուղրուղո՛ւ, թագավորն ինձանով ապրե՛ց...

Թագավորը ոսկին ետ տալիս է իր նազիր-վեզիրին, ասում է.

– Ետ տարեք իրեն տվեք, թե չէ աշխարհքովը մեկ կխայտառակի մեզ էդ անպիտանը...

Նազիր-վեզիրը ոսկին տանում են ետ տալիս աքլորին:

Աքլորն էլ կտուրն է բարձրանում.

– Ծուղրուղո՛ւ, թագավորն ինձանից վախե՛ց...

Թագավորը բարկանում է, նազիր-վեզիրին հրամայում է.

– Գնացե՛ք – ասում է, – բռնեցեք էդ սրիկային, գլուխը կտրեցեք, եփեցեք բերեք ուտեմ, պրծնեմ դրանից:

Նազիր-վեզիրը գնում են աքլորին բռնում, որ տանեն: Տանելիս կանչում է.

– Ծուղրուղո՛ւ, թագավորն ինձ հյուր է կանչե՛լ...

Տանում են մորթում, պղինձն են կոխում, որ եփեն, ձեն է տալի.

– Ծուղրուղո՛ւ, թագավորն ինձ տաք-տաք բաղնիք է դրկե՛լ...

Եփում են բերում թագավորի առաջն են դնում, կանչում է.

– Թագավորի հետ սեղան եմ նստե՛լ, ծուղրուղո՛ւ...

Թագավորը շտապով վերցնում է կուլ տալի: Կոկորդով գնալիս կանչում է.

– Նեղ-նեղ փողոցներով անց եմ կենում, ծուղրուղո՛ւ...

Թագավորը որ տեսնում է՝ կուլ տվեց, էլի ձենը, չի կտրում, իր նազիր-վեզիրին հրամայում է թուրները հանած պատրաստ կենան, որ մին էլ ձեն հանի – զարկեն:

Նազիր-վեզիրը թրերը հանած՝ պատրաստ կանգնում են մեկը էս կողմը, մյուսը էն:

Աքլորը որ թագավորի փորն է հասնում, ձեն է տալի:

— Լուս աշխարհքումն էի, մութ տեղն եմ ընկել, ծուղրուղո՞ւ...

— Զարկեցե՛ք... — հրամայում է թագավորը:

Նազիր վեզիրը զարկում են, տալիս են թագավորի փորը պատռում: Աքլորը դուրս է պրծնում, փախչում է, կտեր ծերին կանգնում ձեն տալի:

— Ծուղրուղո՞ւ...



## ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԸ

Ժամանակով մի աղքատ մարդ կար. որքան աշխատում էր, որքան չարչարվում էր, դարձյալ միևնույն աղքատն էր մնում:

Հուսահատված, մի օր նա վեր կացավ, թե՛ պետք է գնամ գտնեմ Աստծուն, տեսնեմ ես երբ պետք է պրծնեմ այս աղքատությունից, ու ինձ համար մի բան խնդրեմ:

Ծանապարհին մի գալլ պատահեց.

— Առաջ բարի, մարդ-ախպեր, ո՞ր ես գնում, — հարցրեց գալլը:

— Գնում եմ Աստծու մոտ, — պատասխանեց աղքատը, — դարդ ունեմ ասելու:

— Դե որ գնաս Աստծու մոտ, — խնդրեց գայլը, — ասա մի սոված գայլ կա, գիշեր ցերեկ ման է գալիս սար ու ձոր, ուտելու բան չի գտնում, ասա՛ մինչև ե՞րբ պետք է սոված մնա. որ ստեղծել ես՝ ինչո՞ւ չես կերակուր հասցնում:

— Լա՛վ, — ասաց մարդն ու շարունակեց ճանապարհը:

Ծատ գնաց թե քիչ, պատահեց մի սիրուն աղջկա:

— Ո՞ր ես գնում, ախպեր, — հարցրեց աղջիկը:

— Գնում եմ Աստծու մոտ:

Երբ որ Աստծուն տեսնես, — աղաչեց սիրուն աղջիկը, — ասա այսպիսի մի աղջիկ կա՛ ջահել, առողջ, հարուստ — բայց չի կարողանում ուրախանալ, բախտավոր զգալ իրան — ի՞նչ պիտի լինի նրա ճարը:

— Կասեմ, — խոստացավ ճամփորդն ու գնաց: Պատահեց մի ծառի, որ թեև ջրափին էր կանգնած, բայց չոր էր:

— Ո՞ր ես գնում, ա՛յ ճամփորդ, — հարցրեց չոր ծառը:

— Գնում եմ Աստծու մոտ:

— Դե կանգնի՛ր, մի երկու խոսք էլ ես ապրսպեմ, — խնդրեց չոր ծառը, — Աստծուն կասես, այս ի՞նչ բան է, բուսել եմ այս պարզ ջրի ափին, բայց ամառ-ձմեռ չոր եմ մնում. ե՞րբ պետք է ես էլ կանաչեմ:

Այս էլ լսեց աղքատն ու շարունակեց ճանապարհը:

Այնքան գնաց, մինչև գտավ Աստծուն: Մի բարձր ժայռի տակ, մեջքը ժայռին դեմ տված, ալևոր մարդու կերպարանքով նստած էր Աստվածը:

— Բարի օր, — ասաց աղքատն ու կանգնեց Աստծու առաջին:

— Բարով եկար, — պատասխանեց Աստված, — ի՞նչ ես ուզում:

— Էն եմ ուզում, որ ամեն մարդի հավասար աչքով մտիկ անես, մեկին ավար չանես, մյուսին խավարես. այնքան տանջվում, աշխատում եմ, էլի չեմ կարողանում կուշտ փորով հաց գտնեմ, իսկ շատերը, որ իմ կեսի չափ էլ չեն աշխատում, հարուստ ու հանգիստ ապրում են:

— Դե գնա, հիմի կհարստանաս, քո բախտը տվեցի, գնա վայելի՛ր, — ասաց Աստված:

— Էլ բան ունեմ ասելու, տե՛ր, — ասաց աղքատն ու պատմեց սոված գայլի, սիրուն աղջկա ու չոր ծառի ապսպրանքը:

Աստված բոլորի պատասխանը տվեց, և աղքատը շնորհակալությամբ արավ ու հեռացավ:

Վերադարձին պատահեց չոր ծառին:

— Ինձ համար ի՞նչ ասաց Աստված, — հարցրեց չոր ծառը:

— Ասաց, քո տակին ոսկի կա. մինչև այդ ոսկին չհանեն, որ արմատներդ հողին հասնի, դու չես կանաչիլ, — պատմեց մարդը:

— Էլ ո՞ր ես գնում. արի ոսկին հանիր էլի, համբեզ օգուտ կլինի, համ ինձ, դու կհարստանաս, ես էլ կկանաչեմ:

— Չէ՛, ես ժամանակ չունեմ, շտապում եմ, պատասխանեց աղքատը, — Աստված ինձ բախտ տվեց, ես շուտով պետք է գնամ իմ բախտը գտնեմ,

վայելեմ, ասաց ու գնաց:

Հետո սիրուն աղջիկը պատահեց ու ճամփորդի առաջը կտրեց.

— Ի՞նչ լուր բերիր ինձ համար:

— Աստված ասաց՝ դու պիտի քեզ համար մի մտերիմ կյանքի ընկեր գտնես, այն ժամանակ էլ տխուր չես լինիլ, ուրախ ու երջանիկ կլինես:

— Դե որ այդպես է, արի՛ դու եղիր իմ կյանքի մտերիմ ընկերը, — թախանձեց աղջիկը ճամփորդին:

— Չէ՛, ես քեզ ընկերակցելու ժամանակ չունեմ, Աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ, ասաց աղքատն ու հեռացավ:

Ծանապարհին սպասում էր սոված գայլը, հեռվից հեկց որ տեսավ ճամփորդին, վազեց առաջը կտրեց:

— Հը, Աստված ի՞նչ ասաց:

— Ախպեր, Աստծու մոտ գնալիս քեզանից հետո մի սիրուն աղջիկ ու մի շոր ծառ էլ պատահեցին. աղջիկն ապսպրեց, թե ինքը չի կարողանում ուրախանալ, ծառն էլ թե՛ ինչո՞ւ է գարուն, ամառ չոր: Աստծուն պատմեցի, ասաց. — աղջկանն ասա իրան համար մի կյանքի ընկեր գտնի — կբախտավորվի, ծառին էլ ասա՛ քո տակին ոսկի կա, պետք է այդ ոսկին հանեն, արմատների հողին հասնեն, որ կանաչես: Եկա իրենց պատմեցի Աստծու խոսքերը. ծառն ասաց, դե արի, հանիր ոսկին տար, աղջիկն էլ թե՛ ես հեկց քեզ եմ ընտրում ինձ ընկեր: Ասացի չէ՛, ախպեր, չեմ կարող, Աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ:

— Իսկ ինձ համար ի՞նչ ասաց Աստված, — հարցրեց սոված գայլը:

Քեզ համար էլ ասաց՝ սոված ման կգաս, մինչև մի անխելք մարդ կգտնես, կուտես, կկշտանաս:

— Էլ քեզանից անխելք մարդ ո՞րտեղից գրտնեմ, որ ուտեմ, — ասաց գայլն ու կերավ անխելք աղքատին



## ԿԻԿՈՍԻ ՄԱՀԸ

Մի աղքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են երեք աղջիկ:

Մի օր հերը աշխատելիս է լինում, ծարավում է, մեծ աղջկանը ջուրն է դրկում: Էս աղջիկը կուժն առնում է գնում աղբյուրը: Աղբրի գլխին մի բարձր ծառ է լինում: Էս ծառը որ տեսնում է՝ իրեն-իրեն միտք է աճում.

— Հիմի որ ես մարդի գնամ ու մի որդի ունենամ, անունն էլ դնենք Կիկոս. Կիկոսը գա էս ծառին բարձրանա ու վեր ընկնի, քարովը դիպչի մեռնի:

— Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ...

Տեղն ու տեղը ծառի տակին ճատում է՝ սկսում է սուգ անել.

Գնացի մարդի,  
Ունեցա որդի,  
Գդակը պոպոզ,  
Անունը Կիկոս.  
Վեր ելավ ծառին,  
Ցած ընկավ քարին...  
Վա՛յ Կիկոս ջան,  
Վա՛յ որդի ջան...

Մերն սպասում է, սպասում, տեսնում է չեկավ, միջնեկ աղջկանն է դրկում: Ասում է. — Գնա՛ մի տե՛ս, քույրդ ընչի՛ ուշացավ:

Միջնեկ աղջիկն է գնում:

Մեծ քույրը սրան որ տեսնում է՝ ձեռն ավելի է բարձրացնում:

— Արի՛, արի՛, անբախտ մորքուր, տես քո Կիկոսն ինչ եղավ:

— Ի՞նչ Կիկոս:

— Բա չես ասի՛

Գնացի մարդի,  
Ունեցա որդի,  
Գդակը պոպոզ,  
Անունը Կիկոս.  
Վեր ելավ ծառին,  
Ցած ընկավ քարին...  
Վա՛յ Կիկոս ջան,  
Վա՛յ որդի ջան...

— Վա՛յ Կիկոս ջան, վա՛յ, — գոռում է միջնեկ քույրը, ճատում է մեծ քրոջ կողքին ու սկսում են միասին սուգ անել:



Մերն սպասում է, սպասում, տեսնում է չեկան,  
պատիկ աղջկանն է դրկում: Ասում է.

– Աղջի՛, մի գնա տես քույրերդ ի՞նչ եղան: Գնա-  
ցին, ետ չեկան:

Հիմի պատիկ աղջիկն է գնում: Գնում է տեսնում՝  
երկու քույրերն էլ աղբրի գլխին նստած լաց են լինում:

– Քա՛, ընչի՞ եք լաց ըլում:

Մեծ քույրը թե՛ բա չես ասի՛

Գնացի մարդի,

Ունեցա որդի,

Գդակը պոպոզ,

Անունը Կիկոս.

Վեր ելավ ծառին,

Ցած ընկավ քարին...

Վա՛յ Կիկոս ջան,

Վա՛յ որդի ջան...

Վա՛յ քո մորքուրին, Կիկոս ջան, վա՛յ, – սա էլ է  
գլխին տալիս ու մյուսների կողքին նստում, ձեռն-ձեռնի  
տալիս:

Մերն սպասում է, սպասում, տեսնում է աղջիկ-  
ները չեկան, ինքն է գնում:

Հեռվից իրենց մորը տեսնում են թե չէ՝ երեք աղ-  
ջիկն էլ կանչում են.

– Արի՛, արի՛, անբախտ տատի, տե՛ս թոռանդ  
գլուխն ինչ է եկել:

– Ի՞նչ թոռ, ա՛յ աղջկերք, ի՞նչ է պատահել:

Մեծ աղջիկը թե՛ բա չես ասի՛, ա՛յ մեր՝

Գնացի մարդի,

Ունեցա որդի,

Գդակը պոպոզ,

Անունը Կիկոս.

Վեր ելավ ծառին,

Ցած ընկավ քարին...

Վա՛յ Կիկոս ջան,

Վա՛յ որդի ջան...

– Վա՛, քոռանան քու տատի աչքերը, Կիկոս ջան.

– մերն էլ ծնկանը զարկում է, նստում աղջիկների  
կողքին, սկսում է նրանց հետ սուգ անել:

Մարդը տեսնում է կնիկն էլ գնաց աղջիկների  
ետևից ու սա էլ չեկավ: Ասում է՝ մի գնամ տեսնեմ էս  
ինչ պատահեց, որ սրանք իրար ետևից գնացին մնա-  
ցին աղբրումը:

Վեր է կենում գնում:

Կնիկն ու աղջկերքը հենց սրա գլուխը հեռվից  
տեսնում են թե չէ, ձեռն են տալի.

– Արի, արի՛, անբախտ պապի, արի տես քու Կի-  
կոսի գլուխն ի՞նչ է եկել... վա՛յ քու Կիկոսին...

– Ի՞նչ Կիկոս, ի՞նչ եք ասում, – զարմանում է  
մարդը:

Մեծ աղջիկը թե՛ բա չես ասի՛, ա՛յ հեր՝

Գնացի մարդի,

Ունեցա որդի,

Գդակը պոպոզ,

Անունը Կիկոս.

Վեր ելավ ծառին,

Ցած ընկավ քարին...

Վա՛յ Կիկոս ջան,

Վա՛յ որդի ջան...

— Վա՛յ, Կիկոս ջա՛ն, — ծնկներին տալիս են ու սուգ են անում մեր ու աղջկերք:

Սրանց միջի խելոքը հերն է լինում: Ասում է.

— Ա՛յ հիմարներ, ի՞նչ եք նստել էստեղ ու սուգ եք անում: Ինչքան էլ սուգ անեք, ինչքան էլ լաց ըլեք, հո Կիկոսն էլ կենդանանալու չի: Վեր կացեք, եկեք գնանք մեր տունը, մարդ կանչենք, ժամ ու պատարագ անենք, Կիկոսի քելեխը տանք. լացով ի՞նչ պետք է անենք: Աշխարհքի կարգ է, ինչպես եկել է, էնպես էլ պետք է գնա:

Դու մի՛ ասի՛՛ սրանց ունեցած-չունեցած շորստ-նանին մի եզն է լինում, ունեցած փոշին էլ մի քթոց ալյուր:

Գալիս են էս եզը մորթում, էս մի քթոց ալյուրն էլ հաց թխում, ժողովուրդ են կանչում, ժամ ու պատարագ են անում, Կիկոսի քելեխն ուտեցնում, որ նոր հանգստանում են:



## ԳՏՆՎԱԾ ԵՐԱԶ

Լինում է, չի լինում, մի գեղեցիկ, հեքիաթային քաղաք: Այս քաղաքում ապրում էր մի փոքրիկ, փոքրիկ աղջիկ: Ամեն գիշեր, քնելուց առաջ, պապիկը նրա համար մի հեքիաթ, կամ մի պատմություն էր պատմում:

Եվ ահա, մի գիշեր, երբ աղջիկը անկողնում պարկած, թերթում էր գեղեցիկ, գեղեցիկ թիթեռներով գիրքը, ներս մտավ պապիկն ու ասաց.

— Դու դեռ չե՞ս քնել, չե՞ որ արդեն գիշեր է:

— Պապիկ, — ասաց աղջիկը — այս գրքում այնքան գեղեցիկ թիթեռներ կան, ասա, որտե՞ղ են նրանք ապրում:

— Քնի՛ր, թոռնիկս, — ասաց պապիկը, — հիմա ուշ է, թիթեռների մասին ես կպատմեմ վաղը: Բարի գիշեր:

— Իսկ դո՞ւ, — հարցրեց աղջիկը:

— Ես ծերությունից կորցրել եմ քունս: — Ասաց պապիկը, թիթեռներով գիրքը դրեց սեղանին, մարեց լույսն ու դուրս եկավ սենյակից:

— Խեղճ պապիկ, միթե՞ քունը կարելի է կորցնել: Եթե ես կարողանայի գտնել այն... — մթությունան մեջ ասաց աղջիկն ու փակեց աչքերը:

Կեսգիշերին, գիրքը, որ պապիկը դրել էր սեղանի ծայրին, ընկավ հատակին: Նրա բացված էջերից կենդանացան ու դուրս թռան գույնզգույն, մեծ-մեծ թիթեռնիկները: Նրանք մի շրջան արեցին սենյակում, ու գնացին, մտան պատին կախված նկարի մեջ: Զարմացած աղջիկը, նույնպես մոտեցավ նկարին, մի քիչ բարձրացավ ու... ա՛յ քեզ հրաշք... Ինքն էլ մտավ նկարի մեջ: Իսկ նկարի մեջ անտառ էր... բարձր-բարձր ծառեր ու գեղեցիկ, աննման ծաղիկներ: Ծուրջ-բոլորը թռչուններն են երգում-ծլվում, գույնզգույն, մեծ-մեծ թիթեռներն են թռչկոտում... Իսկական հեքիաթային աշխարհ... Եվ ուրախացած, աղջիկը վազվզում էր, թռչկոտում թիթեռների ետևից...

Եվ հանկարծ... Այս ինչ ձայն է... Ինչ որ մեկը բարձր-բարձր, աղեկտուր լալիս է... Աղջիկը գնում է լացի ուղղությամբ և հայտնվում անտառի բացատում: Չորս կողմը ծառեր-ծաղիկներ են, իսկ կենտրոնում մի հին, փայտե տնակ: Տնակի մոտ, ճերմակ-ճերմակ մորուքով, կլորիկ դեմքով, մի ծերուկ նստած հոնգուր-հոնգուր լաց է լինում: Աղջիկը մոտենում է նրան և հարցնում:

— Ինչո՞ւ ես լալիս, ծերուկ:

— Ինչ որ մի բան սխալ է: Ես ապրում եմ այստեղ

շատ վաղուց, բայց շուրջս ոչինչ չի փոխվում և ես հոգնել եմ: — Ասում է ծերուկն ու շարունակում լաց լինել. — Իսկ դու ո՞վ ես:

— Ես՝ աղջիկ — պատասխանում է աղջիկը:

— Իսկ դա ի՞նչ է, — հարցնում է ծերուկը:

— Այդ ես եմ...

— Որտեղի՞ց դու եկար — հարցնում է ծերուկը:

Ես եկա իմ սենյակից: Այս նկարը այնտեղ է կախված, — պատասխանում է աղջիկը:

— Իսկ ինչպե՞ս դու հայտնվեցիր նկարի մեջ — շարունակում է հարցնել ծերուկը:

— Ինձ օգնեցին թիթեռնիկները — պատասխանում է աղջիկը:

— Հը՛... Ուրեմն դու կարող ես մտնել նկարի մե՞ջ... — սարսափած հարցնում է ծերուկը: Հետո, աղջկա ձեռքը բռնած, տանում է տուն, կանգնեցնում պատին կախված նկարի առջև:

— Սա ի՞նչ է — հարցնում է ծերուկը:

— Նկար — ասում է աղջիկը:

— Գիտեմ որ նկար է — բարկանում է ծերուկը — իսկ ինչո՞ւ այնտեղ արև չկա...

— Որովհետև — ասում է աղջիկը — այս նկարում գիշեր է:

— Գիշե՞ր — զարմանում է ծերուկը — իսկ դա ի՞նչ է:

— Գիշերը... — բացատրում է աղջիկը — գիշերը արևը մայր է մտնում և դուրս է գալիս լուսինը: Գիշերը...

— Խնդրում եմ, տար ինձ այնտեղ, ես երբեք չեմ

տեսել գիշեր — խնդրում է ծերուկը: Աղջիկը բարձրա-  
նում է և մտնում... Ակարի մեջ: Հետո օգնում է ծերու-  
կին և միասին հայտնվում են գիշերային Ակարում:

— Գնանք, ես քեզ ցույց կտամ գիշերվա հրաշք-  
ները — սկսում է աղջիկը: Գիշերը երկնքում աստղերն  
են շողում: Տե՛ս, աստղ է ընկնում: Ծուտ մի բան մտա-  
ծիր, անպայման կկատարվի... — ասում է աղջիկը,  
շրջվում ծերուկի կողմը, բայց ծերուկը՝ չկա: — Էս ո՞ր  
կորավ. — Ծերո՛ւկ — կանչում է աղջիկը, և լռության  
մեջ խոռոցի ձայն է լսում:

Ծերուկը, գլուխը քարին դրած, անուշ-անուշ քնել  
է թփերի ետևում և բարձր-բարձր խոռացնում է: Կա-  
մացուկ, որ հանկարծ շարթնացնի ծերուկին, աղջիկը  
ես է քաշվում ու բռնում վերադարձի ճամփան:

— Բարի գիշեր, ծերուկ, ինչ լավ է, որ օգնեցի  
քեզ — ասում է աղջիկն ու շարունակում ճանապարհը:

— Ա՛խ, եթե ես կարողանայի գտնել իմ պապիկիս  
քունը — ասում է աղջիկը, Ակարից ցատկում իր սենյակ  
և... բացում է աչքերը: Պարզվում է այս ամենը երազ  
էր...

Բայց այս ինչ խոռոց է... ինչ-որ մեկը դարձյալ  
բարձր-բարձր խոռացնում է: Աղջիկը զարմացած  
իջնում է մահճակալից, բացում սենյակի դուռը և ինչ...  
դա իր պապիկն է... քնել է բազմոցի վրա և բարձր-  
բարձր խոռացնում է:

— Բարի լույս, պապիկ... — ուրախ բացականչում  
է աղջիկը: Չէ որ պապիկը գտել էր կորցրած քունը:  
Իսկ ինքը գտել էր իր... երազը: